

Հաստատված է  
ԵՄԽՀ-ի գիտական խորհրդի  
„\_\_\_\_\_” 20 թ, նիստ \_N\_\_\_\_  
Գիտխորհրդի նախագահ՝ Ա.Ս.Աղաբաբյան  
„\_\_\_\_\_” 20 թ

**ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**  
**ԵՄԽՀ ՆԵՐՔԻՆ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ**  
**ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՄԱՆ**

**1. Ընդհանուր դրույթներ**

- 1.1 ԵՄԽՀ ( այսուհետև՝ համալսարան ) ներքին շահակիցների բավարարվածության հարցման կանոնակարգը սահմանում է համալսարանի ներքին շահակիցների բավարարվածության գնահատման, հարցման անցկացման և արդյունքների օգտագործման կարգը:
- 1.2 Հարցումն անց է կացվում «Կրթության մասին» ՀՀ օրենքի, ԵՄԽՀ կանոնադրության, ԵՄԽՀ որակի ապահովման հայեցակարգի, ԵՄԽՀ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի /մշտադիտարկման/ և պարբերական վերանայման կարգի և ռազմավարական ծրագրի /ՌԾ/ պահանջներին համապատասխան և համարվում է ներքին շահակիցների կողմից ուսումնական և աշխատանքային միջավայրի արդյունավետությունը գնահատելու իրավունքի դրսևորում:
- 1.3 Հարցման անցկացման նպատակն է բարելավել ուսումնական և աշխատանքային միջավայրը ուսանողների և աշխատակիցների արդյունավետ գործունեության համար:

**2. Հարցման անցկացումը**

- 2.1 Հարցումն անց է կացվում համալսարանի աշխատակիցների և ուսանողների շրջանում:
- 2.1 Հարցումն իրականացվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջին ամիսներին:

- 2.2 Հարցումն անցկացվում է համալսարանի մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի (ՄԿՈԱ) կողմից:
- 2.3 Հարցումն անցկացվում է սույն կանոնակարգին կից գնահատման հարցաթերթով ( հավելված 1,2):
- 2.4 Հարցումն անանուն է և անց է կացվում թղթային եղանակով:

### ***3. Հարցման արդյունքների մշակումը և պահպանումը***

- 3.1 Հարցման արդյունքները մշակվում, վերլուծվում և պահպանվում են ՄԿՈԱ կենտրոնում:
- 3.2 Հարցման արդյունքները ներկայացվում են յուրաքանչյուր հարցապնդման պատասխանի համար հաշվարկված գնահատականների միջին թվաբանականով, միջին քառակուսային շեղումով և ստացված յուրաքանչյուր գնահատականի քանակով:
- 3.3 Հարցումներն ունեն կարծիքների և առաջարկությունների բաժիններ, որոնց արդյունքները մշակվում և ներկայացվում են ուսումնառության բարելավմանը միտված ընդհանրացված առաջարկությունների տեսքով:
- 3.4 Հարցաթերթիկներում գնահատականների ուղղումները չեն հաշվարկվում:
- 3.5 Հարցման հարցաթերթերը և վերլուծությունները պահվում են 5 տարի:

### ***4. Հարցման արդյունքների օգտագործումը***

- 4.1 Հարցման արդյունքները ՄԿՈԱ բաժինը քննարկում է համապատասխան ստորաբաժինների հետ: Քննարկման արդյունքում մշակվում են առաջարկություններ և երաշխավորություններ, որոնք ներկայացվում են որակի կառավարման հանձնաժողովին:
- 4.2 Հարցման արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է համալսարանի պաշտոնական կայք էջում:
- 4.3 Հարցման արդյունքները օգտագործվում են համալսարանի՝
  - ✓ Ռազմավարական նոր ծրագրի մշակման ժամանակ,
  - ✓ Մասնագիտությունների կրթական ծրագրերի կազմման ու վերանայման,

- ✓ Ֆինանսական, ուսումնական, կրթական ու գիտական գործունեության և նյութատեխնիկական բազան բերելավելու համար:

**5. Կարգի հաստատումը և նրանում փոփոխությունների իրականացումը**

5.1 Սույն կանոնակարգը հաստատում է համալսարանի գիտական խորհուրդը:

5.2 Կանոնակարգում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել համալսարանի.

5.2.1 ռեկտորի,

5.2.2 գիտական խորհրդի անդամների,

5.2.3 որակի կառավարման հանձնաժողովի առաջարկությամբ՝ գիտական խորհրդի որոշմամբ:

**ԵՄԽՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ  
Հ Ա Ր Ց Ա Թ Ե Ր Թ**

Հարգելի՛ ուսանողներ, ԵՄԽՀ-ը կարևորում է ձեր կարծիքը և վստահեցնում, որ ձեր անկեղծ ու օբյեկտիվ պատասխանները կօգնեն մեզ բարելավելու համալսարանի գործունեությունը: Հարցումն անանուն է, և ստացված տվյալները կօգտագործվեն միայն ընդհանրացված տեսքով:

Խնդրում ենք լրացնել հարցաթերթը և

- գնահատել 5 միավորանոց սանդղակով, որտեղ 5-ը ամենաբարձր, իսկ 1-ը ամենացածր գնահատականն է:
- ընտրել «այո» կամ «ոչ» պատասխաններից մեկը:

1. Տեղեկացված էք արդյոք՝	ԱՅՈ	ՈՉ
Խորհրդատվական ( ուսումնական խորհրդատու/կուրատոր/կուրսղեկ) Աշխատանքների, ծառայությունների մասին.		
Լրացուցիչ խորհրդատվության պարապմունքների մասին:		
2. Ընդգրկված էք արդյոք լրացուցիչ խորհրդատվական պարապմունքներին		
3. Գնահատեք Ձեր բավարարվածությունը		
Խորհրդատուի /կուրատոր/կուրսղեկ) աշխատանքներից, ծառայություններից, Լրացուցիչ խորհրդատվական պարապմունքներից:		
4. Նշեք ձեր առաջարկությունները խորհրդատվական ծառայությունների բարելավման ուղղությամբ:		
5. Տեղեկացված էք արդյոք ուսանողների օժանդակության և ուղղորդում տրամադրող վարչական ծառայությունների մասին(ղեկանատ, հաշվապահություն, տնտեսական մաս, ուսումնամեթոդական բաժին, ռեկտորատ):		
6. Դիմե՞լ էք արդյոք՝		
ռեկտորատ		
անձնակազմի կառավարման բաժին,		
ուսումնամեթոդական բաժին,		
վարչատնտեսական բաժին,		
հաշվապահություն,		
գրադարան:		

7. Եթե դիմել եք, գնահատեք Ձեր բավարարվածությունը նրանց աշխատանքից.		
նեկտորատի		
անձնակազմի կառավարման բաժնի,		
ուսումնամեթոդական բաժնի,		
վարչատնտեսական բաժնի,		
հաշվապահության,		
գրադարանի:		
8. Նշեք ձեր առաջարկությունները վերոհիշյալ ստորաբաժինների աշխատանքների բարելավման ուղղությամբ:		
9. Տեղեկացված եք արդյոք շրջանավարտների կարիերիայի կենտրոնի մասին:		
10. Օգտվում եք արդյոք նրանց ծառայություններից՝		
շրջանավարտների և կարիերիայի կենտրոն,		
ֆակուլտետի կողմից տարվող աշխատանքներ:		
11. Բավարարված եք արդյոք նրանց աշխատանքից՝		
շրջանավարտների և կարիերիայի կենտրոն,		
ֆակուլտետի կողմից տարվող աշխատանքներ:		
12. Ֆակուլտետում Ձեր կարիերային նպաստող ի՞նչ աշխատանքներ են իրականացվում:		
1.		
2.		
3.		
13. Նշեք ձեր առաջարկությունները կենտրոնի աշխատանքների բարելավման ուղղությամբ:		
14. Տեղեկացված եք արդյոք ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատուների մասին:		
ուսանողական խորհուրդ,		

ուսանողների իրավունքների պաշտպանման հանձնաժողով:		
15. Օգտվում էք արդյոք նրանց ծառայություններից՝		
ուսանողական խորհուրդ,		
ուսանողների իրավունքների պաշտպանման հանձնաժողով:		
16. Գնահատե՞ք Ձեր բավարարվածությունը նրանց աշխատանքից՝		
ուսանողական խորհուրդ,		
ուսանողների իրավունքների պաշտպանման հանձնաժողով:		
17. Նշե՞ք ձեր առաջարկությունները նշված կառույցների աշխատանքների բարելավման ուղղությամբ.		
18. Տեղեկացվա՞ծ եք արդյոք համալսարանի պաշտոնական էլ. կայքի մասին:		
19. Հաճախակի եք օգտվում կայքից /ընդգծել/	շատ հաճախ	
	հաճախ	
	երբեմն	
	հազվադեպ	
20. Եթե օգտվում եք կայքից գնահատե՞ք ձեր բավարարվածությունը.		
կառուցվածքից,		
տեղեկատվության ստացման հարմարավետությունից,		
տեղեկատվության լիարժեքությունից,		
կայքի ընհանուր գրավչությունից:		
21. Նշե՞ք ձեր առաջարկությունները կայքի աշխատանքների բարելավման ուղղությամբ.		
22. Գնահատե՞ք ձեր բավարարվածությունը համալսարանի ռեսուրսներից և ծառայություններից		
լսարանների կահավորումից,		
լսարանների տեխնիկական հագեցվածությունից,		
մասնագիտական գրականության առկայությունից,		
ընթերցասրահի հարմարավետությունից,		
ջեռուցումից,		
բուժկետի ծառայությունից,		
անվտանգության համակարգից,		
սանիտարահիգիենիկ վիճակից,		
սննդի և հանգստի պայմաններից,		
գիտամշակութային կյանքից		

համալսարանում էթիկայի նորմերի պահպանումից:

23. Նշեք ձեր առաջարկությունները համալսարանի ռեսուրսների և ծառայությունների բարելավման ուղղությամբ.

24. Նշեք համալսարանի գործունեության երեք ուժեղ կողմերը.

1.

2.

3.

25. Նշեք համալսարանի գործունեության երեք թույլ կողմերը.

1.

2.

3.

26. Այլ առաջարկություններ համալսարանից ձեր բավարարվածության մեծացման ուղղությամբ:

ԵՄԽՀ պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի  
բավարարվածության ուսումնասիրության

Հ Ա Ր Յ Ա Թ Ե Ր Թ

Հարգելի՛ աշխատակիցներ, ԵՄԽՀ-ը կարևորում է ձեր կարծիքը և վստահեցնում, որ ձեր անկեղծ ու օբյեկտիվ պատասխանները կօգնեն մեզ բարելավելու համալսարանի գործունեությունը: Հարցաթերթն անանուն է, և ստացված տվյալները կօգտագործվեն միայն ընդհանրացված տեսքով:

Խնդրում ենք լրացնել հարցաթերթը և

- գնահատել 5 միավորանոց սանդղակով, որտեղ 5-ը ամենաբարձր, իսկ 1-ը ամենացածր գնահատականն է:
- ընտրել «այո» կամ «ոչ» պատասխաններից մեկը:

	Գնահատականը
Գնահատեք ձեր բավարարվածությունը համալսարանի ռեսուրսներից և ծառայություններից	
Աշխատատեղի կահավորումից	
Աշխատատեղի տեխնիկական հագեցվածությունից	
Լսարանի կահավորումից	
Լսարանի տեխնիկական հագեցվածությունից	
Մասնագիտական գրականությունից	
Ընթերցասրահից	
Ջեռուցումից	
Բուժկետի ծառայություններից	
Անվտանգության համակարգից	
Սանիտարահիգիենիկ վիճակից	
Մենքի և հանգստի պայմաններից	
Միջանձնային հարաբերություններից	
Աշխատավարձից	
Ի՞նչը կնպաստի ձեր աշխատանքի արդյունավետության բարձրացմանը.	
Գնահատեք ձեր բավարարվածությունը գործընթացների կազմակերպումից.	



Ուսումնական	
Կարգապահական	
Մասնագիտական գործունեությանը նպաստող միջոցառումներ	
Գիտամշակութային կյանք	
Լրացուցիչ /արտաժամյա/ աշխատանքի խրախուսում	
Ինքնազարգացման հնարավորությունից	
Նշեք ձեր առաջարկությունները վերը նշված գործընթացների բարելավման համար.	
Գնահատեք ձեր բավարարվածությունը հետևյալ ստորաբաժանումների աշխատանքից.	
Ռեկտորատի	
Անձնակազմի կառավարման բաժնի	
Ուսումնամեթոդական բաժնի	
Վարչատնտեսական բաժնի	
Մասնագիտական կրթության որակի ապահովման կենտրոնի	
Հաշվապահության	
Դեկանատի	
Ամբիոնի	
Գրադարանի	
Օրինականության պահպանման և ուսանողների իրավունքների պաշտպանության հանձնաժողովի	
Ուսանողական կառույցների	
Նշեք ձեր առաջարկությունները վերը նշված ստորաբաժանումների աշխատանքները բարելավելու ուղղությամբ.	
Ձեր կարծիքը համալսարանի էլ.կայքի վերաբերյալ	
Եթե օգտվում եք համալսարանի էլ.կայքից, սպա գնահատեք ձեր բավարարվածությունը	
Կառուցվածքից	
Տեղեկատվության ստացման հարմարավետությունից	
Տեղեկատվության լիաժեքությունից	

Նորությունների լուսաբանումից		
Գրավչությունից		
Հաճախ եք օգտվում կայքից / ընդգծել/		
		Ամենօրյա Հաճախ Երբեմն Հազվադեպ
Նշեք ձեր առաջարկությունները կայքի էջի աշխատանքների բարելավման համար.		
Նշեք համալսարանի գործունեության երեք ուժեղ կողմերը.		
1.		
2.		
3.		
Նշեք համալսարանի գործունեության երեք թույլ կողմերը.		
1.		
2.		
3.		
Այլ առաջարկություններ համալսարանից ձեր բավարարվածության մեծացման ուղղությամբ:		